





Food and Agriculture
Organization of the
United Nations

ԻՆՉՊԵՍ ՆՎԱԶԵՅՆԵԼ ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱԹՆԱՅԻՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ




Թարմ ջուրը, ստվերը, հանգիստը և լավ օդափոխությունը կարող են նվազեցնել ջերմային սթրեսը, մաստիտի առաջացումը, շնչառական և այլ առողջական խնդիրներ՝ միաժամանակ բարելավելով կաթի արտադրությունը:

Հիվանդություններն առավել արագ են տարածվում խիտ պահվածքի դեպքում: Այդ պատճառով, յուրաքանչյուր կենդանուն անհրաժեշտ է ապահովել բավարար տարածք: Անասնաշենքում, յուրաքանչյուր կովի համար միջինում անհրաժեշտ է ապահովել 4.5-5.5 մ քառ. տարածք:




Պատվաստումը համարվում է հուսալի այլընտրանք հակաբիոտիկներին՝ որոշ հիվանդությունների կանխարգելման համար: Համոզվեք, որ հետևում եք ձեր ֆերմայի պատվաստումների օրացուցային պլանին:

Կենսանվտանգության համապարփակ ծրագրին հետևելով՝ կնվազեցնեք հիվանդությունների առաջացման դեպքերը:



Խոնավությունը, կեղտը և գոմաղբը համարվում են հիվանդությունների առաջացման բարենպաստ միջավայր: Օգտագործեք ցամքար, ինչպիսիք են՝ ծղոտը, թեփը կամ տաշեղները: Ցամքարը մաքուր և չոր պահեք, հաճախակի փոխեք այն՝ մաստիտի, կաղության և շնչառական խնդիրների առաջացումը նվազեցնելու նպատակով:

Կովերի ցամաքի շրջանի ճիշտ կազմակերպումը կարող է կանխել վարակների առաջացումը և դրականորեն ազդել կաթնատվության շրջանի վրա:



Կաթի որակը և կրծի առողջությունը առավելապես կախված է կթի կազմակերպումից: Մաքրեք և ախտահանեք պտուկներն ու ձեր ձեռքերը մինչև կիթը: Օգտագործեք մաքուր կթի սարքավորումներ և հազուստ: Այս ամենը կնվազեցնի մաստիտի տարածումը:

Հորթի ծնվելուց հետո առաջին 4 ժամվա ընթացքում նրան կերակրեք առնվազն 3 լիտր խեժ՝ հիվանդությունների նկատմամբ բարձր դիմադրողականություն ապահովելու նպատակով: Դրանից հետո՝ առաջիկա 4 ժամվա ընթացքում կերակրեք ևս 2 լիտր խեժ:




Բարձր մթերատու կենդանիները ավելի ընկալունակ են հիվանդությունների նկատմամբ: Այդ պատճառով, խորհուրդ է տրվում ընտրել այնպիսի ցեղատեսակ, որը առավել հարմար կլինի ձեր արտադրական նպատակներին:

Եղեք տեղեկացված ձեր արտադրությանն առնչվող հավասարակշռված կերակրման մասին, որպեսզի ապահովեք սպիտակուցի, Էներգիայի և թաղանթանյութի բավարար քանակություն: Այն կարող է պահպանել ձեր կենդանիների առողջությունը և նվազեցնել սթրեսը:



ԿԱԹՆԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԴԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ՄԿԱՆԱԿՈՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼԸ



Some rights reserved. This work is available under a CC BY-NC-SA 3.0 IGO licence